

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ ՄՈՏ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-ԻՆ, ԺԱՄԸ 9:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Խաչատուր Մկրտչյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Արման Խաչատրյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սերյոժա Գրիգորյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Անի Խաչատրյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական՝ Աննա Սիմոնյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Տաթևիկ Մկրտչյանի

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

**1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա մի շարք հրատապ և ընթացիկ խնդիրների քննարկում**

**Քննարկվեցին՝**

**Հարց 1.** Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջիկայում Արմավիրի մարզ կատարելիք արտագնա խորհրդակցության շրջանակներում ներկայացվելիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաշվետու զեկույցի սահիկաշարի լրամշակման աշխատանքների ընթացքի և սահմանված ժամկետում համապատասխան մարմիններ ներկայացնելու մասին

/ Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ – Դավիթ Խուդաթյան/

**Հանձնարարական՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանին՝

ա/ սահմանված ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2024 թվականի հունվարի 18-ի N 02/12.63/2007-2024, 2024 թվականի փետրվարի 27-ի N 02/12.63/7227-2024 հանձնարարականների և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 19-ի N ԳՍ/15.2/12.63/1888-2024 գրության պահանջների ամբողջական կատարումը և համապատասխան ձևաչափով լրացված սահիկաշարի լրամշակված տարբերակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

**Ժամկետ՝ 05.03.2024թ.:**

**Հարց 2.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և մարզի համայնքապետարանների միջև փաստաթղթաշրջանառության գործընթացն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ

/ Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետ – Դավիթ Խուրաթյան/

### **Հանձնարարական՝**

**1.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ հիշեցման կարգով ի գիտություն ընդունել այն, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N ՄՈ/1029-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ներքին գործավարության նոր կարգի 97-րդ կետի համաձայն, աշխատակազմի կատարող ստորաբաժանում փաստաթղթաշրջանառության <<Mulberry>> էլեկտրոնային համակարգով (այսուհետ՝ Համակարգ) մտից և ելից գրությունների, հանձնարարականների կատարման ժամկետների համար պատասխանատվություն է կրում տվյալ ստորաբաժանման ղեկավարը,

բ/ ակտիվ, արդյունավետ ու սերտ համագործակցության ապահովմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և մարզի համայնքապետարանների միջև փաստաթղթաշրջանառության իրականացման ընթացքում, հնարավորինս սեղմ ժամկետներում համայնքապետարաններից համապատասխան տեղեկատվություն ստանալն ակնկալել բացառապես գրավոր առաջարկության կարգով և կոնկրետ ժամ չնշելով:

**2.** Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի N ՄՈ/1029-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ներքին գործավարության նոր կարգի 96-րդ կետի պահանջի համաձայն, ուժեղացնել հսկողությունը աշխատակազմում համակարգով մտից և ելից գրությունների, հանձնարարականների կատարման ժամկետների պահպանման, ինչպես նաև օրակարգային 2-րդ հարցի

քննարկման արդյունքներով 2.1 կետի թ/ ենթակետով տրված հանձնարարականի կատարման նկատմամբ:



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝**

2024-03-06 17:23:32 GMT+4  
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից



**ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի  
աշխատակազմի անձնակազմի կառավարման,  
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության  
հետ կապերի վարչության  
պետ՝ Դավիթ Դավթյան